



ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սադաթեյանի
հարյուրօրյա պաշտոնավարման
արդյունքների մասին

Վայոց ձորի մարզը բնութագրող հիմնական ցուցանիշները:

Մարզը զբաղեցունում է 2308 քառ. կմ տարածք, որը կազմում է հանրապետության տարածքի 7.8 տոկոսը: Բնակչության թիվը կազմում է 50800 մարդ, որից գյուղական բնակչությունը՝ 41 համայնքներում կազմում է 33.1 հազ. մարդ, իսկ քաղաքային բնակչությունը՝ երեք քաղաքներում կազմում է 17.7 հազ. մարդ, որը 2001 թվականի համեմատությամբ նվազել է 5200 մարդով: Մարզի համայնքները գտնվում են նախալեռնային և լեռնային գոտիներում: Սահմանամերձ են հինգ համայնքներ:

Մարզի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է, որտեղից միջին հաշվով տարեկան արտադրվում է 21.8 միլիարդ դրամի համախառն արտադրանք: Մեկ շնչի հաշվով արտադրվում է 429 հազար դրամի արտադրանք:

Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են 6566 հա, որից՝ վարելահող 2762 հա, որը կազմում է ընդհանուր վարելահողերի միայն 17 տոկոսը: Մինչդեռ մարզի տարածքում տարեկան մթնոլորտային տեղումները չեն անցնում 400-450մմ-ից: Այդ է հիմնական պատճառը, որ անջրդի վարելահողերի մի զգալի մասը շուրջ 10000 հա դուրս են մնում ցանքաշրջանառությունից:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթելյանը պաշտոնավարման հենց առաջին օրերին կարևորել է կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունները: Մարզպետը առաջին շաբաթվա ընթացքում (07.06.2018) հանդես եկավ կոռուպցիայի դեմ պայքարի գործողությամբ, կոչով դիմելով Վայոց ձորի ազգաբնակչությանը:

Այնուհետև մարզպետի նախաձեռնությամբ Վայոց ձորում գործող հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական նախաձեռնության խմբերի ներկայացուցիչների ընդգրկումով ստեղծվել է մարզպետին կից հակակոռուպցիոն հանձնախումբ և հունիսի 27-ին, տեղի է ունեցել Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթելյանը հանդիպումը հանջնախմբի հետ, հետևյալ օրակարգով՝ 1. Վայոց ձորի մարզում կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի հարցերը, 2. Հակակոռուպցիոն միջոցառումներին մարզում գործող ՀԿ ներկայացուցիչների ակտիվ ներգարվածության ապահովման խնդիրները:

Հուլիսի 11-ին կայացավ Վայոց ձորի մարզում կոռուպցիայի դեմ պայքարի խնդիրների քննարկմանը նվիրված ՀԿ ներկայացուցիչների հետ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթելյանի երկրորդ հանդիպումը: Պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում նա անզիջում պայքար է մղել կոռուպցիայի դեմ:

Այցելություններ համայնքներ

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետ Ա. Սաղաթելյանն այցելել է մարզի բոլոր համայնքներ, ծանոթացել համայնքներում կատարվող աշխատանքներին, համայնքների բնակիչներին զուհող հարցերին և լուշում պահանջող առկա խնդիրներին:

Մարզպետը եղել է նաև խոշորացված համայնքների մի շարք բնակավայրերում՝ հունիսի 27-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթելյանն աշխատանքային այցով եղել է Արենի համայնքում, հուլիսի 9-ին Արենի համայնքի ղեկավար Արենի խոշորացված համայնքի

Խաչիկ բնակավայրում, իսկ օգոստոսի 23-ին՝ Գլաձոր համայնքի Գլաձոր, Վերնաշեն և Գետափ բնակավայրեր: 07.08.2018թ. ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթեյանն այցելեց Արենի համայնքի Չիվա և Ելփին բնակավայրեր: Մարզպետի ուշադրության կենտրոնում մշտապես եղել են մարզային ենթակայության առողջապահական կազմակերպությունների և հանրակրթական հաստատությունների գործունեությունը: Հանդիպումներ են կազմակերպվել կրթական հաստատությունների և առողջապահական կազմակերպությունների ղեկավարների հետ, ոլորտները համակարգող համապատասխան ստորաբաժանման ղեկավարների մասնակցությամբ: Կրթական հաստատությունների տնօրենների հանդիպման ժամանակ քննարկվել են կրթության որակի բարձրացման խնդիրները: Մարզպետը հանձնարարել է կրթական հաստատությունների տնօրեններին՝ դպրոցներում բացառել ցանկացած տիպի կոռուպցիոն դրսևորումները:

Իսկ առողջապահական կազմակերպությունների ղեկավարների հետ քննարկվել են բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարձրացման ուղիներին, սպասարկման ընթացքում կոռուպցիոն դրսևորումների բացառմանը, վճարովի բժշկական ծառայությունների գանձումներին և նշված գումարի տրամաբանակն բաշխմանը վերաբերող հարցեր: Քննարկումներին կարևորվել է առողջապահական կազմակերպությունների առողջացման խնդիրները և դրանց ուղղված հնարավոր քայլերը: Մարզպետը մասնակցել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի մոտ կայացած ՀՀ մարզերի խնդիրներին նվիրված բոլոր քննարկումներին: Հուլիսի 26-ին տեղի է ունեցել Վայոց ձորի մարզային գորակոչային հանձնաժողովի նիստը: Պատշաճորեն կազմակերպվել է 2018 թվականի ամառային գորակոչը: Կազմակերպվել է նաև հանդիպում 2018 թ. Հայոց բանակից զորացրված երիտասարդների հետ: Հանդիպման ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթեյանը և ՀՀ ՊՆ 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ մայոր Վալերի Քոչարյանը ծանոթացել են քաղաքացիական կյանքում նրանց հուզող խնդիրներին և պատրաստակամություն հայտնել անձնական հանդիպումների ընթացքում քննարկել և փորձել լուծումներ գտնել այդ խնդիրներին: Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի մոտ ընդունելության են եկել մարզի 342 քաղաքացիներ՝ հունիս ամսին՝ 85(դրամական օժանդակություն են ստացել 83-ը), հուլիս ամսին՝ 119(դրամական օժանդակություն են ստացել 118-ը), օգոստոս՝ 138(դրամական օժանդակություն են ստացել 135-ը):

Մարզպետը կարևորելով սոցիալական աջակցության գումարների բաշխման նպատակայնությունը և ճիշտ հասցեականությունը, որոշեց այդ գումարները ոչ թե փոքր-փոքր քանակով բաժանել բոլոր դիմումատուներին (որոնք ի դեպ այցելում էին համարյա ամենամսյա հաճախականությամբ), այլ ուսումնասիրել սակավ հնարավորություններով և բազմազավակ ընտանիքների, հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները և հատկացումներն ուղղել իրապես սոցիալական հարցեր լուծելու նպատակին: Վայոց ձորի մարզպետարանում մշակվում է <<Այլ նպաստներ>> հոդվածով գումարների բաշխման հայեցակարգ:

ՀՀ Վարչապետի և կառավարության անդամների ընդունելություններ

Հուլիսի 6-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթեյանի ուղեկցությամբ եղել է Ջերմուկ համայնքում: Նիկոլ Փաշինյանը հանդիպումներ է ունեցել Վայոց ձորի համայնքների ղեկավարների, Եղեգնաձորի ու Արենիի բնակիչների հետ:

Օգոստոսի 10-ին ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանն աշխատանքային այցով Վայոց ձորի մարզում էր: ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում մարզի բժշկական հաստատությունների ղեկավարների մասնակցությամբ կայացավ խորհրդակցություն:

Օգոստոսի 15-ին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթելյանի և Ջերմուկի համայնքապետ Վարդան Հովհաննիսյանի ուղեկցությամբ, աշխատանքային այցով Ջերմուկ առողջարանային քաղաքում ծանոթացել է և պարզել քաղաքում տարվող շինարարական աշխատանքների արդյունավետության և հետագա ծրագրերի նպատակահարմարության հարցը:

Օգոստոսի 18-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթելյանը հյուրընկալել է ՀՀ մշակույթի նախարար **Լիլիթ Մակունցին**:

Օգոստոսի 21-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթելյանը հանդիպում է ունեցել ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ **Նազենի Ղարիբյանի** հետ:

ՀՀ գյուղատնտեսության նախարար **Արթուր Խաչատրյանը** օգոստոսի 24-ին հերթական մարզային այցելություն է կատարել՝ այս անգամ ուղևորվելով դեպի Վայոց ձոր: Մարզպետ Արագած Սաղաթելյանի և գյուղատնտեսության փոխնախարար **Գառնիկ Պետրոսյանի** ուղեկցությամբ նախարարը նախ այցելել է Արենիի խաղողի այգիներ, որտեղ արդեն հասունացել է վայոցձորյան հայտնի «Արենի» սորտի խաղողը:

Արտաքին հարաբերություններ

Հունիսի 19-23-ը ՌԴ Արխանգելսկի պատվիրակությունը Արխանգելսկի նահանգապետ Իգոր Օրլովի գլխավորությամբ գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզում:

Այցի նպատակը 2018 թվականի ապրիլի 9-ին Արխանգելսկում Վայոց ձորի և Արխանգելսկի իշխանությունների կողմից ստեղծված <Արխանգելսկ և Վայոց ձոր մարզերի համագործակցության միություն> ոչ առևտրային կազմակերպության վերահսկիչ խորհրդի անդրանիկ նիստի անցկացումն էր:

Հունիսի 20-ին ՌԴ Արխանգելսկի և ՀՀ Վայոց ձորի մարզերի ղեկավարները հյուրընկալվել են ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանի մոտ:

Հունիսի 29-ին Վայոց ձորի մարզի պատվիրակությունը մարզպետ Արագած Սաղաթելյանի գլխավորությամբ մասնակցել է Երևանում մեկնարկած Հայ-ռուսական միջտարածաշրջանային յոթերորդ համաժողովին:

Մ/թ սեպտեմբերի 18-ին նախատեսվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթելյանի այցը ՌԴ Արխանգելսկի մարզ ՌԴ Արխանգելսկի մարզի ղեկավար Իգոր Օրլովի հրավերով:

Միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումներ:

Հուլիսի 27-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթելյանը հյուրընկալել է Եղեգնաձորի <Տուրիզմի տարածաշրջանային կենտրոն> ՀԿ-ի և իտալական ՓԻՆ /PIN/

ՄՊԸ-ի ներկայացուցիչներին, Հայաստանի մանկական զարգացման հիմնադրամի տնօրենին և միջազգային այլ կազմակերպությունների ղեկավարներին:

Ծրագրեր

Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում առաջիկա տարում նախատեսվում է Համաշխարհային Բանկի ֆինասավորմամբ կառուցել առողջապահության արդի պայմաններին համապատասխան հիվանդանոց, մինչև 2.0 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք գումարով:

Շուտով կհայտարարվի նաև Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի նոր շենքի կառուցման մրցույթը, որը կազմում է 1.2 մլրդ դրամ: Շինարարությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Շինարարությունը կանգնեցվել էր շենքի հիմքերի քանդման աշխատանքների ընթացքում խաղողի հնձանի հայտնաբերման կապակցությամբ: Ի դեպ մասնագետները, շինարարությունը ֆինանսավորող Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ղեկավարների հետ համագործակցաբար, գտել են հնձանը պահպանելու տարբերակը:

Խնդիրներ

1. Խաղողի մթերման հարցը

Սեպտեմբերի 10-ին կայացավ հանդիպում մարզում գործող գինեգործարանների տնօրենների հետ, որի ընթացքում քննարկվեց մարզում արտադրված խաղողի մթերման հետ կապված հարցեր:

2. Վարելահողերի քանաքի ավելացում

Մարզում գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 190331.03 հա, որից վարելահող՝ 15.919 հա, ոռոգվող՝ 2763 հա, որ կազմում է ընդհանուրի 17%-ը:

Ծրագրվում է մարզի Խաչիկ և Ելփին գյուղերում կառուցել ջրամբարներ, որի արդյունքում ջրովի վարելահողերը կավելանան:

3. Ամուլսարի խնդիրը

Կառավարության հանձնարարությամբ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից ստեղծվել է Ամուլսարի հանքի շահագործման նախապատրաստական աշխատանքների ընթացքում բնապահպանական պայմանների պահպանման կամ խախտման դեպքերի ուսումնասիրման հանձնախումբ:

Բնապահպանների եզրակացության հիման վրա ՀՀ կառավարությունը կընդունի համապատասխան որոշում: Բնականաբար մարզպետը Ա. Սաղաթեյանը նույնակարծիք է լինելու ՀՀ կառավարության որոշմանը:

4. Գործազրկություն

ՀՀ Կառավարության հետ համատեղ մշակվում են մարզային զարգացման ծրագրեր , որոնց իրականացման ընթացքում նախատեսվում աշխատատեղերի ավելացում:

Համայնքներում իրականացվում են շինարարական աշխատանքներ, որտեղ նույնիսկ մասնագետներ-արհեստավորների սակավություն է զգացվում:

Բյուջետային հատկացումներ

2017 թվականի առաջին կիսամյակում մարզին 19 ծրագրերով պետբյուջեից ֆինասավորումը կատարվել է 1094579.7 հազար դրամ, որից 758884.1 հազար դրամ ծախսվել է կրթության ոլորտում:

Մշակույթի ոլորտին հատկացվել է 9399.3 հազար դրամ, որից պետական աջակցության մշակութային միջոցառումների իրականացման համար հատկացվել է 366.1 հազար դրամ: Մարզի 29 համայնքների բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 103.7 %-ով: ՀՀ 2017 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեից համայնքների հատկացված դոտացիան եղել է 497402.5 հազ. Դրամ: Ֆինանսավորվել է 100 %-ով: ՀՀ Կառավարության որոշմամբ 2017 թվականին առաջին կիսամյակի ընթացքում փոխհատուցվել է մարզի սահմանամերձ Բարձրունի, Խաչիկ, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ և Սերս համայնքների էլեկտրաէներգիա սպառող բնակիչ-բաժանորդների կողմից հաշվարկային տարում գումարային մինչև 1440 կվտ/ժ կվտ/ժ էլեկտրաէներգիայի քանակությունների համար 50% չափով: Քանզի նշված համայնքները գազաֆիկացված չեն, գազի գնի համար նախատեսված գումարը փոխանցվում է որպես էլ.էներգիայի վարձավճար, յուրաքանչյուր բաժանորդին փոխհատուցելով 180 խոր/մ ծախսած գազի համարժեք գումարի չափով: Առաջին կիսամյակում ընդամենը փոխհատուցվել է 14884.30 հազ. դրամ, բնական գազի և էլեկտրաէներգիայի գումար: Գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով հատկացվել է 1510.0 հազ. դրամ, որը ֆինանսավորվել 100%-ով:

Քաղաքաշինություն և զարգացման ծրագրեր. Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են դպրոցների, մշակույթի տների, մանկապարտեզների, համայնքապետարանների վարչական շենքերի, բազմաբնակարան շենքերի, մարզական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները:

2018թ. քաղաքաշինության բնագավառում ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվելու է -239100.0 հազ. դրամ, ներդրում, որի արդյունքում կստեղծվի ժամանակավոր աշխատատեղեր:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից կկատարվի 77000.0 հազ. դրամ՝ Ագարակաձորում ՕԿՁ-ի կառուցում (12000.0 հազ. դրամ), Ռինդում մանկապարտեզի վերակառուցում (50000.0 հազ. դրամ), Վարդահովիտում ՕԿՁ-ի կառուցում (15000.0 հազ. դրամ):

Համայնքային բյուջեներով կիրականացվի 96927.75 հազ. դրամի չափով աշխատանքներ՝ Արենի համայնքի Արենի բնակավայրում՝ (17853.07 հազ. դրամ), Ագարակաձոր բնակավայրում (3614.26 հազ. դրամ), Աղավնաձոր բնակավայրում (7277.03 հազ. դրամ), Արփի բնակավայրում (10840.0 հազ. դրամ), Ելփին բնակավայրում (945.71 հազ. դրամ), Խաչիկ բնակավայրում (3029.3 հազ. դրամ), Չիվա բնակավայրում (7271.9 հազ. դրամ), Ռինդ բնակավայրում (182.18 հազ. դրամ), **Զառիթաի համայնքի** Զառիթաի Զառիթաի բնակավայրում (8170.0 հազ. դրամ), Մարտիրոս բնակավայրում (15500.0 հազ. դրամ), Արտավան բնակավայր (6500.0 հազ. դրամ), Նոր Ազնաբերդ բնակավայր (5871.7 հազ. դրամ), Բարձրունի բնակավայր (6180.2 հազ. դրամ), Սերս բնակավայր (7242.4 հազ. դրամ), **Գլաձոր համայնքի** Գլաձոր բնակավայրում (200.0 հազ. դրամ), Գետափ բնակավայր (50.0 հազ. դրամ), Վերնաշեն բնակավայր (1069.08 հազ. դրամ), **Եղեգիս համայնքի** Հորս բնակավայրում (3700.0 հազ. դրամ):

«Լիդիան Արմենիա» -ի կողմից 20000000.0 հազ. դրամ

«Գնիշիկ» միջհամայնքային բնապահպանական հիմնադրամ 11712.386 հազ. դրամ՝ Արենի համայնքի Ելփին, Չիվա, Ռինդ բնակավայրերի լուսավորության անցկացման համար:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն 3928.560 հազ. դրամ՝ Արենի բնակավայրի Քաղաքացիների սպասարկման գրասենյակի հիմնանորոգում և կահույքի ձեռքբերում:

Գյուղատնտեսության բնագավառ.

Ընթանում են բերքահավաքի աշխատանքները, 07.09.2018թ դրությամբ արտադրվել է 4094տ հացահատիկ և ընդեղեն, 1620տ պտուղ և հատապտուղ, որից 1060տ ծիրան, 684տ բանջարեղեն, որից 241տ լոլիկ, 51տ ձմերուկ և սեխ, 866տ կարտոֆիլ, 20տ խաղող, 30951տ խոտ և 900տ ծղոտ:

Կատարվել են անասնաբուժական պրոֆիլակտիկ բոլոր միջոցառումները: Լիզինգով ձեռք է բերվել մեկ միավոր գյուղտեխնիկաՄարզում առկա է 28

հացահատիկահավաք կոմբայն, որոնցից սարքին են 22-ը: Կոմբայնները ըստ գոտիականությամբ համակարգված տեղաշարժելով կարող ենք խնդիրներ չունենալ բերքահավաքը ժամանակին և անկորուստ իրականացնելու աշխատանքներում:

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար մարզի 6 համայնքների հատկացված 24կգ ռոդիֆակում թունանյութի միջոցով 300հա վարակված վարելահողերի և բազմամյա տնկարկների վրա իրականացվել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ: Աղավնաձոր, Ռինդ, Գնդեվազ, Արին համայնքները և <<Գետափի գինու գործարան>>-ը արտահանել են մոտ 270 տոննա ծիրան /միջին գինը 200- 250 դրամ/: 2018թ գարնանը մարզի համայնքներում հիմնվել է մոտ 50 հա պտղի և խաղողի այգիներ, ինչպես նաև կառուցվել երեք սառնարանային տնտեսություն 110տոննա հզորությամբ:

Գարնանային ցրտահարությունից և կարկտահարությունից վնասվել են Զառիթափ, Մալիշկա, Արենի, և Եղեգիս համայնքների այգիներն ու ցանքատարածությունները. 2018 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 18631 /-1124/ գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝ 8039 /-380/ գլուխ, մանր եղջերավոր՝ 13817 /-2991/ գլուխ, խոզեր՝ 2097 /-422/ գլուխ, թռչուններ՝ 107552 /40846/ թև և մեղվաբնտանիք՝ 23199 /10/ փեթակ:

Կրթության և մշակույթի ոլորտ. Աշխատանքները նպատակաուղղվել են ապահովելու մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթություն ստանալու հավասար մատչելիությանն ու համակարգի արդյունավետ գործունեությանը:

Վայոց ձորի մարզում գործում է 48 հանրակրթական դպրոց, այդ թվում 14 հիմնական և 31 միջնակարգ: 2 ավագ դպրոց և 1 կրթահամալիր գործում են ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում, 5 դպրոցներ՝ բարձր լեռնային բնակավայրերում: Մարզում գործում է տարածաշրջանային պետական քոլեջ և Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը: Մինչև 50 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 17 է:

50-100 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 10 է: 100 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 21 է: Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան: Ոստիկանության կողմից հաշվառման վերցված երեխաներ չկան:

Մարզի 48 դպրոցներում 2018-2019 ուստարում սովորում է 5781 աշակերտ:

Հողաշինության և հողօգտագործման ոլորտ

Հաշվետու ժամանակաշրջանում կազմել ենք մարզի հողային հաշվեկշիռը առ 1-ը հուլիսի 2018 թվականի դրությամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշմամբ Արենիի, Եղեգնաձոր, Գլաձոր, Վայք, Ջերմուկ և Զառիթափ համայնքներում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրարժեքից - բարձրարժեքի՝ փոփոխության են ներկայացվել 193.6 հա, որից փոփոխվել է խաղողի այգի 49.6հա , պտղատու այգի 144 հա, որոնք էլ արձանակվել են մարզի 2018 թվականի հողային հաշվեկշռում: Այս գործընթացը շարունակվում է:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 16 առաջարկություններ, որից 10-ին հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն՝ հողերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ, որն էլ սահմանված կարգով փոխանցել ենք համայնքի ղեկավարին, մնացած 6 -ը ընթացքի մեջ են: Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից առ 1-ը սեպտեմբերի 2018թ օտարվել է 69.9 հա, 76596225 դրամ գումարով, վարձակալության է տրամադրվել 1633հա՝ կնքվել են 32 վարձակալական պայմանագիր:

ՏԻՄ ոլորտ.

Մարզի 8 համայնքներում համայնքային ծառայության 83 թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ, որոնց արդյունքում համալրվել է 67 պաշտոն:

Համակարգվել է 2018 թվականի ապրիլի 14-ին կայացած և 2018 թվականի սեպտեմբերի 8-ին կայանալիք համապետական շաբաթօրյակների կազմակերպման աշխատանքները:

ՀՀ Վայոց ձորի մարզում 2018թ.առկա է 13 շահագործվող աղբավայր, 4 փակման ենթակա չշահագործվող աղբավայր(Մալիշկա, Մալլի, Վերնաշեն Քարագլուխ գյուղերում), որոնք մասնակիորեն փակվել են վերջին շաբաթօրյակի ժամանակ, իսկ 2017թ. 129 աղբավայրերից փակվել են 112-ը:: Մարզում տնտեսվարող 768 իրավաբանական անձանցից 743-ի հետ կնքվել է աղբահանության պայմանագիր, որը կազմում է 96.7 %:

Առողջապահության եւ սոցիալական ապահովության ոլորտ.

Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է՝ 2018թ.-ին 608429.7 հազ. դրամ: Մատուցվել է 38168.3 հազ.դրամի վճարովի բժշկական ծառայություններ, որից համավճար՝ 2455.0 հազ.դրամ: 2018թ.-ին ընթացքում պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 39 տեղից ուղեգրող հանձնաժողովի կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 8 քաղաքացի, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 19 մեծահասակ և 4 երեխա:

Հրատապ եռամսյակային օգնություն է ստացել 100 ընտանիք, վճարվել է 14.5 մլն դրամ: Ավանդների փոխհատուցում է ստացել 105 մարդ, վճարվել է 20.4 մլն. դրամ ավանդ: Մարզում կենսաթոշակառուների թիվը 10061 է, որոնց վճարվել է շուրջ 3.1 մլրդ. դրամ կենսաթոշակ:

Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվել է 929 գործազուրկ: Աշխատանքի է տեղավորվել 49 մարդ:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

Բաժնի աշխատանքների մեջ զգալի տեղ է գրավում համագործակցությունը երեխաների իրավունքների պաշտպանության և կանանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կառույցների հետ, անցկացվել են մի շարք հանդիպումներ, կլոր սեղաններ և դասընթացներ:

Բաժնի նախաձեռնությամբ <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամը մարզում իրականացրել է աջակցության ծրագրեր՝ Ագարակաձոր համայնքում միայնակ մոր ընտանիք ստացել է դրամական և նյութական աջակցություն (կենցաղային տեխնիկա, գույք, անկողնային պարագաներ, սնունդ), Հորբատեղ համայնքում բազմազավակ մեկ ընտանիք օգտվել է գյուղատնտեսական ծրագրից՝ տրամադրվել է խոշոր եղջերավոր անասուններ, սոցիալապես անապահով 250 ընտանիքի տրամադրվել է սնունդ, առողջական խնդիրներ ունեցող երեք երեխաների տրվել է ֆիզիոթերապևտիկ բուժում ստանալու հնարավորություն: << Հայաստանի Ֆուլեր Տնաշինական Կենտրոն>> բարեգործական հասարակական կազմակերպության բնակարանաշինության ծրագրի շնորհիվ Հորբատեղ համայնքի սոցիալապես անապահով բազմանդամ մեկ

ընտանիք հնարավորություն է ունեցել ավարտին հասցնել իր կիսակառույց առանձնատան շինարարությունը:

Նամակների և քաղաքացիների ընդունելության ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում՝ հունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, մարզպետի մոտ ընդունելության են եկել մարզի 342 քաղաքացիներ՝ հունիս ամսին՝ 85(ղրամական օժանդակություն են ստացել 83-ը), հուլիս ամսին՝ 119(ղրամական օժանդակություն են ստացել 118-ը), օգոստոս՝ 138(ղրամական օժանդակություն են ստացել 135-ը):

Հանրային իրազեկման ոլորտ.

2018 թվականի հունիսի 1-ին սեպտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում մարզպետարանի պաշտոնական կայքում հրապարակվել է 126 լուսաբանական նյութ.

1. լրատվական 59 նյութ՝ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանում կայացած աշխատանքային հանդիպումների, քննարկումների, խորհրդակցությունների վերաբերյալ.
2. լրատվական 6 նյութ Վայոց ձորի մարզպետի՝ մարզի համայնքներ կատարած աշխատանքային այցերի վերաբերյալ, 6 նյութ Վայոց ձորի մարզպետի կողմից կազմակերպած քաղաքացիների ընդունելությունների և դրանց արդյունքների վերաբերյալ
3. Շնորհավորական 5 ուղերձներ
4. Հակակոռուպցիոն 6 նյութեր
5. Իրազեկման 6 հայտարարություն և տեղեկատվական 19 նյութ
6. Ընդունելությունների վերաբերյալ 12 նյութ,
7. Հանրապետական կարգի խորհրդակցությաններին (ՀՀ ՏԿԶՆ-ում) մասնակցելու վերաբերյալ՝ 7:

Հրատարակվել է <<Վարդաձոր>> ամսաթերթի 2 համար, տարվա ընթացքում՝ 7-ը:

